ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» համահայկական հայրենասիրական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև:

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը:

Նկատի առնելով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ.

Կարևորելով ուսանողների կարողությունների զարգացում պրակտիկ ոլորտում.

Ընդունելով Ինստիտուտի և Կազմակեևպության պատրաստակամությունը պրակտիկ համատեղ աշխատանքների իրականացման, ուսանողների գործնական պարապմունքների կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյակի շուրջ՝

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1.1 Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ինստիտուտը և Կազմակերպությունը պատրաստակամ են «Հրաձգություն» առարկայի գործնական պարապմունքները անցկացնել Կազմակերպությունում:

2.2 Ինստիտուտը և Կազմակերպությունը պատրաստակամ են համագործակցել միջին մասնագիտական և արհեստագործական կրթական ծրագրերի կենտրոնի (քոլեջի) «Թիկնապահական գործ» մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված հատուկ մասնագիտական բաժնի «Հատուկ վարորդական հմտություններ» մոդուլը կազմակերպելու գործում:

2"3 Սույն Հուշագրով Ինստիտուտը և Կազմակերպությունը կարող են համագործակցել նաև՝

2.3.1 Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում,

2.3.2 Երիտասրդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության ոլորտում համատեղ իրականացվող ծրագրերի, գործնական պարապմուքների և այլ միջոցառումների կազմակերպման աշխատանքներում,

2.3.3 Երիտասարդության, սահմանամերձ բնակավայրերի բնակչության մոտ նախնական զինվորական պատրաստության ուսուցման և առանձին միջոցառումների ձևով,

2.3.4 Սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.3.5 Ինստիտուտի և Կազմակերպության գործունեության ոլորտներին առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում,

2.3.6 Մրցումներիր, հուշամրցաշարերի և մարզական տոների համատեղ կազմակերպման գործում,

2.3.7 Ռազմաուսումնական առաջնակարգ տեխնոլոգիաների փոխանակման, համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման շուրջը,

2.3.8 Կազմակերպությունում բուհի շրջանավաևտներին համապատասխան ոլորտում աշխատանքի անցնելուն աջակցելու հարցերի շուրջ,

2.3.9 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու միջոցով:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Ինստիտուտը և Կազմակեպությունը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2026 թվականի հունվարի 26-ին:

4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պայից և գործում անժամկետ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինստիտուտ

«Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 11
ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան

ստորագրություն՝ Կ.Տ.

Կազմակերպություն

«Հայաստանի ԴՕՍԱԱՖ» համահայկական հայրենասիրական հասարակական կազմակերպություն

ք .Երևան, Արշակունյաց 5
նախագահ՝ Էդիկ Հակոբյան

ստորագրություն՝ Կ.Տ.